ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱԹՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԶՈՐԻԿԻ

ՍՈՑԻԱԼ—ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕՏԱՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԵՐԹԻՄԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Աննա Գևորգի Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մելս Պարգևի Մկրտումյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արայիկ Ռոբերտի Ֆիրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. հուլիսի 14-ին, ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 12.06.2026 թ.:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
Գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդրի ուսումնասիրությունները բացահայտում են անձի կյանքի մի շարք ոլորտներ, որոնցում արդիական են դառնում նոր միջավայրին անձի ադապտացիայի գործընթացները, միջանձնային հարաբերությունները, «մենք»-«նրանք» արժեքային կողմնորոշումները և այլն: Սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները վկայում են, որ ժամանակակից մարդու գործունեության և կյանքի համար առաջնահերթ է դարձել նոր միջավայրին արագ հարմարվելու, սոցիալական փոխհարաբերություններում ճկունություն դրսևորելու ունակությունը: Այս համատեքստում որոշ չափով փոխակերպվում են նաև անձի պատկերացումները Ես-ի մասին, ի հայտ են գալիս օտարացման նոր հարթություններ, որոնք ավելի ու ավելի են ներթափանցում անձի ներաշխարհ: Եթե նախորդ դարի հոգեբանական ուսումնասիրություններում օտարացման սոցիալ-հոգեբանական գործընթացները վերլուծվում էին հիմնականում անծանոթ մարդկանց հետ շփումների, միգրացիոն գործընթացների համատեքստում, ապա այժմ սոցիալ-հոգեբանական օտարացման գործընթացները ձեռք են բերում անձի Ես-կառուցվածքի աղավաղման երանգներ և իմաստներ: «Ես»-ի և «օտարի» միջև փոխհարաբերությունների ըմբռնման հարցը հատկապես կարևոր է դառնում աշխատանքային գործունեության համատեքստում, երբ աշխատանքային թիմի անդամները հաճախ առանձնանում կամ նույնիսկ հակադրվում են միմյանց իրենց գործառույթներով և պարտականություններով: Աշխատանքային թիմի անդամների «բաժանումը» «մենք»-ի և «օտարների» բացասաբար է անդրադառնում աշխատանքային բարեկեցության գնահատականների վրա:

Օտարացման հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական երևույթը ուսումնասիրվում է որպես ներխմբային համախմբվածության և թիմի ներսում հոգեբանական մթնոլորտի դրսևորման գործոն, ինչպես նաև՝ որպես արժեքային կողմնորոշումների ձևավորման ու վարքային մոդելների կազմակերպման նշանակալի ցուցիչ: Հատկապես հետաքրքրություն են ներկայացնում աշխատանքային թիմերում սոցիալ-հոգեբանական օտարացման դրսևորումները, այդ ընկալումների խորը կապերն աշխատակցի ինքնաճանաչման և ինքնագնահատման գործընթացների հետ: Հատկապես ընդգծվում է օտարացման դերն ու նշանակությունը աշխատանքային թիմերում հոգեբանական մթնոլորտի ձևավորման և գնահատման տեսանկյունից:

Վերլուծվել են արժեքային կողմնորոշումների տեսական մոդելները, իսկ արժեքապահանջմունքային կողմնորոշումների ժամանակակից դրսևորումները համեմատական վերլուծության են ենթարկվել ներթիմային համախմբվածության, ներթիմային համատեղելիության մասին պատկերացումների հետ: Որակական և քանակական վերլուծության արդյունքում հնարավոր է դարձել վերհանել «յուրային-օտար» դիխոտոմիկ արժեքային պատկերացումների համալիրը,

ներթիմային սոցիալ-հոգեբանական մթնոլորտը և սոցիալ-հոգեբանական օտարացման արժեքաիմաստային և վարքային-հաղորդակցական բնութագրերը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել օտարացման հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական մեկնությունները, վերհանել օտարացման ասպեկտներն ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգում, հետազոտել սոցիալ-հոգեբանական օտարացման արժեքային կողմնորոշումները հոգեբանական մթնոլորտի և ներթիմային համախմբվածության սուբյեկտիվ գնահատականներում:

Հետազոտության նպատակից ելնելով առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները՝**

- Ուսումնասիրել սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդրի տեսական մեկնությունները,
- Վերհանել օտարացման հիմնախնդրի սոցիալ-հոգեբանական դրսևորումները,
- Հետազոտել արժեքապահանջմունքային կողմնորուշումների տեսական վերլուծությունները,
- Վերհանել սոցիալ-հոգեբանական օտարացման ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների բնութագրերը,
- Մշակել սոցիալ-հոգեբանական օտարացման հայեցակարգային մոդելը,
- Փորձարարական եղանակով բացահայտել սոցիալ-հոգեբանական օտարացման և հոգեբանական մթնոլորտի կազմակերպման փոխկապվածությունը,
- Փորձարարական եղանակով բացահայտել սոցիալ-հոգեբանական օտարացման և ներթիմային համախմբվածության ու ներթիմային ինքնագնահատականի արժեքային կողմնորոշումները:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ սոցիալ-հոգեբանական օտարացումը, որպես ներթիմային արժեքապահանջմունքային գնահատումների համակարգ, արտահայտվում է արժեքային կողմնորոշումների բևեռացմամբ և ներխմբային համախմբվածության դիսֆունկցիոնալությամբ, որտեղ սոցիալ-հոգեբանական մթնոլորտը և հոգեբանական տարածության պարամետրերը հանդես են գալիս իբրև փոխկախյալ դետերմինանտներ՝ պայմանավորելով համախմբվածության մակարդակն ու դրա դինամիկան:

Ենթավարկածներ՝

1. Ենթադրվում է, որ սոցիալ-հոգեբանական օտարացման գործընթացները թիմում հանդես են գալիս իբրև դետերմինանտներ՝ պայմանավորելով կոնֆլիկտային հոգեբանական մթնոլորտի ձևավորումը և դրա դոմինանտությունը:
2. Սոցիալ-հոգեբանական օտարացման արժեքապահանջմունքային բնութագրերը ունեն երկակի՝ սոցիալ-հոգեբանական և անձնային դետերմինացիա, որտեղ անձնային տիրույթում առանցքային

դերակատարում ունեն նևրոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության գործոնները:

Հետազոտության օբյեկտն է՝ օտարացման սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրը:

Հետազոտության առարկան է՝ օտարացման հիմնախնդիրը ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումներում:

Հետազոտության տեսամեթոդական հիմքն են հանդիսացել Մ. Վուլֆի և Ս. Նարտովա-Բոչավերի հայացքները հոգեբանական սուվերենության, Մ. Ռոկիչի, Ջ. Հորլիի և Կ. Կլակհոնի տեսական մոտեցումները արժեքային կողմնորոշումների դասակարգման, Ն. Կոնոնովի, Դ. Այն-Գարի, Ա. Լինգիսի, Դ. ՄաքԱդամսի, Ջ. Ռիկերի հայացքները օտարի կերպարի և օտարացման ֆենոմենի, Ս. Նիկերսոնի, Տ. Պետիգրյուի կարծիքները աշխատանքային թիմում միջանձնային հարաբերությունների կառուցման ու վերափոխման վերաբերյալ: Մեթոդական գործիքակազմի ձևավորման համար հիմք են հանդիսացել Ս. Նարտովա-Բոչավերի, Ա. Քոչարյանի, Լ. Վասսերմանի, Մ. Ռոկիչի, Ջ. Մորենոյի և այլոց մեթոդական մշակումները:

Հետազոտության մեթոդներն են՝

Փորձարարական հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- ✓ Թեստավորման մեթոդ՝
- ✓ «Մեծ հնգյակ» հարցարանի մոդիֆիկացված անձնային գծերի բացահայտման «Հինգ-գործոնային մոդել» հարցարան,
- ✓ «Հոգեբանական տարածության սուվերենություն» մեթոդիկա
- ✓ Խմբում ինտեգրման մակարդակի և թիմային ինքնագնահատականի ախտորոշում
- ✓ Պրոյեկտիվ մեթոդ՝
- ✓ «Անծանոթի պատկեր»-ի հեղինակային վերլուծություն
- ✓ Սոցիոմետրիկ վերլուծություն
- ✓ Հարցաթերթիկի մեթոդ՝
- ✓ Օտարի ինքնաընկալման հեղինակային հարցաթերթիկ
- ✓ Օտարի ընկալման վարքային բնութագրերի հեղինակային հարցաթերթիկ
- ✓ Ռեյտինգավորման մեթոդ՝
- ✓ Փոխկախյալության ինքնագնահատման սանդղակ
- ✓ Արժեքային կողմնորոշումների գնահատման մեթոդիկա
- ✓ Սոցիալ-հոգեբանական մթնոլորտի գնահատում. Տեսա-անալոգային սանդղակ
- ✓ Թիմի հոգեբանական մթնոլորտի գնահատման սանդղակ
- ✓ Օտարի արժեքային գնահատման հեղինակային սանդղակը՝ բաղկացած հետևյալ ենթասանդղակներից՝
- ✓ Օտարի արժեքային գնահատման իրավիճակային ենթասանդղակ
- ✓ Օտարի արժեքային գնահատման պատկերացումային ենթասանդղակ

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հոգեբանության տարածության, որպես սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդրի ներթիմային արժեքապահանջմունքային բաղադրիչի, վերհանումը թույլ է տալիս նորովի լուսաբանելու աշխատանքային կոլեկտիվներում ներխմբային համախմբվածության և թիմային ինքնագնահատականի ֆենոմենները: Ուսումնասիրության արդյունքները նոր հնարավորություններ են ստեղծում տարբեր սոցիալական խմբերում նևրոտիզմի երևույթի հետագա ուսումնասիրության համար:

Փորձարարական եղանակով վերլուծվում են օտարացման դրսևորումները տարբեր սեռատարիքային խմբերում և այդ դրսևորումների կապը նևրոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության մակարդակների հետ: Ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների համատեքստում սոցիալ-հոգեբանական օտարացման հիմնախնդիրը ներկայացվում է արժեքաիմաստային և վարքային-հաղորդակցական բնութագրերի համալիր կառուցվածի միջոցով:

Հետազոտության տեսագործնական նշանակությունը Ուսումնասիրության տեսական նշանակությունը կայանում է օտարացման արժեքաիմաստային և վարքային, հաղորդակցական բնութագրերի ներկայացման մեջ: Ընդգծվում է սոցիալ-հոգեբանական օտարացման փիլիսոփայական նշանակությունը՝ որպես աշխատանքային բարեկեցության գնահատման մեթոդաբանական հիմք: Ուսումնասիրության հիմնական արդյունքները թույլ են տալիս ընդլայնել մեր գիտական պատկերացումները թիմի ներսում հոգեբանական մթնոլորտի կազմակերպման և աշխատանքային միջավայրում բարեկեցության ժամանակակից ներթիմային գործընթացների վերաբերյալ:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը ընդգծվում է հարցվողների տարբեր սեռատարիքային խմբերում ներթիմային արժեքապահանջմունքային կողմնորոշումների բացահայտման արդյունքներով: Ուսումնասիրությունը ընդգծում է սոցիալ-հոգեբանական օտարացման հոգեչափական գործիքների վերհանման կարևորությունը և հոգեբանների ուշադրությունը հրավիրում է այս երևույթի դրսևորումների վրա::

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

- Սոցիալ-հոգեբանական օտարացումը բազմաչափ ֆենոմեն է, որի առանցքային բնութագրերը ձևավորվում են արժեքա-իմաստային և վարքային-հաղորդակցական մակարդակներում:
- Օտարացման արժեքապահանջմունքային կողմնորոշումները միտված են ներթիմային ինքնագնահատականի ձևավորմանն ու արտահայտվում են ներթիմային համախմբվածության մակարդակով:
- Սոցիալ-հոգեբանական օտարացման արժեքային բնութագրերն արտահայտվում են հոգեբանական տարածության և հոգեբանական մթնոլորտի սուբյեկտիվ գնահատականներում:

- Սոցիալ-հոգեբանական օտարացման արժեքապահանջմունքային դրսևորումները միտված են արժեքային բևեռացմանն ու «յուրային» սոցիալական միջավայրը «օտարից» ծայրահեղ տարանջատմանը:
- Սոցիալ-հոգեբանական օտարացման ներթիմային գործընթացներն ուղեկցվում են ևնրոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության շեշտադրմամբ:
- Ներթիմային համախմբման և ներթիմային բարձր ինքնագնահատականի դրսևորումներն ուղեկցվում են խմբի ամբողջականությունը պահպանելու ցանկությամբ և ներթիմային պատասխանատվությա բարձր մակարդակով:
- Ներթիմային համախմբվածության բարձր մակարդակը փոխկապված է օտարի արտաքին արժեքային կերպարի ձևավորման հետ, ինչը նպաստում է թիմերի միջև մրցակցային փոխգործակցության, իսկ թիմի ներսում՝ սոցիալ-հոգեբանական դրական մթնոլորտի կառուցմանը:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականության ընտրությամբ և ուսումնասիրությամբ, հետազոտության տեսամեթոդական հիմնավորմամբ, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդական գործիքակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ և մեկնաբանմամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: իրականացվել է «Ջունիոր Քլաբ» մանկական կենտրոն ՍՊԸ-ում, «ԷՄ ՍԵՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ում, «Արփիսոլար» ՍՊԸ-ում, «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում, «Դու կարող ես» ՔՀԿ-ում, «ԱՊԱԳԱ» բարեգործական հիմնադրամում, «ՍՐՉԴԵՍՔ ՊԼԱՏՖՈՐՄԶ» ՓԲԸ-ում, «ՌԵՆՇԻՆ» ՍՊԸ-ում և այլ կազմակերպություններում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, 19 աղյուսակից և 13 գծապատկերից: Աշխատանքի ծավալը կազմում է տպագիր 137 էջ: Օգտագործվել է 191 աղբյուր՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախուսության ներածության մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը և մշակվածության աստիճանը, սահմանված է աշխատանքի նպատակը և խնդիրները, ձևակերպված են հետազոտության վարկածը և ենթավարկածները, սահմանված են հետազոտության օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության տեսամեթոդաբանական հիմքերն ու ընտրված մեթոդները: Ատենախոսության ներածության մեջ ներկայացվում են նաև աշխատանքի տեսակագործնական նշանակությունը, գիտական նորույթը, ինչպես նաև՝՝ պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին **«Օտարացման հիմնախնդիրը սոցիալ-հոգեբանական գիտակարգում»** գլխում վերլուծության են ենթարկվում սոցիալ-հոգեբանական օտարացման գիտատեսական հիմքերը և հիմնախնդրի ուսումնասիրման ժամանակակից միտումները: Առաջին «Սոցիալ-հոգեբանական օտարացման գիտատեսական մեկնությունները» ենթագլխում ներկայացվում են Լևի-Բրյուլի, Լևի-Ստրոսսի, Բոասի և այլ մարդաբանների տեսակետները օտարացման հիմնախնդրի վերաբերյալ, Հուսերլի, Թոմասի, Շերմանի, Կոհենի և այլոց ֆենոմենոլոգիական և հոգեբանական վերլուծությունները «յուրային»-«օտար» արժեքային հակադրության վերաբերյալ, Կլակհոնի, Գրոմանի, Ռոկիչի, Մեյոյի և այլոց ուսումնասիրությունները օտարացման սոցիալ-հոգեբանական և արժեքային դրսևորումների վերաբերյալ: Երկրորդ՝ «Օտարացման սոցիալ-հոգեբանական բնութագրումները» ենթագլխում նկարագրվում է անձի դիխոտոմիկ վերաբերմունքն «Ես»-ի ը «Օտար»-ի հանդեպ: Օտարացման սոցիալ-հոգեբանական բնութագրերի դասակարգման և համակարգված կերպով ուսումնասիրման նպատակով վեր են հանվել տարբեր հեղինակների տեսական մոտեցումներում տեղ գտած օտարացման սոցիալ-հոգեբանական բնութագրումները, որոնց համեմատական վերլուծությունը հանգեցրել է սոցիալ-հոգեբանական բնութագրերի երկու խոշոր տիրույթների ձևակերպմանն՝ ըստ օտարացման վարքային-հաղորդակցական և արժեքային-իմաստային տիրույթների: Երրորդ՝ «Սոցիալ-հոգեբանական օտարացման ժամանակակից միտումները» վերտառությամբ ենթագլխում ներկայացվում են օտարացման սոցիալ-հոգեբանական բնութագրերի ձևավորման կամ վերափոխման ժամանակակից միտումները:

Ատենախոսության երկրորդ **«Արժեքապահանջմունքային կողմնորոշումների համակարգը սոցիալ-հոգեբանական օտարացման համատեքստում»** գլխում վերլուծության է ենթարկվում արժեքային կողմնորոշումների հոգեբանական ֆենոմենը «յուրային»-«օտար», «մենք»-«նրանք» հասկացությունների շրջանակում: Առաջին՝ «Անձի արժեքային կողմնորոշումների սոցիալ-հոգեբանական քննություն» վերտառությամբ ենթագլխում մատնանշվում է, որ արժեքային կողմնորոշումներն ուղենշում են սոցիալական նորմերի յուրացման գործընթացը, որի դրսևորման յուրահատկություններն ուսումնասիրության կարևոր օբյեկտ են դարձել հոգեբանական գիտակարգում: Ներկայացվում են Վերնոնի, Լինդզիի, Ջերվիսի, Հորլիի և այլոց հայացքները արժեքային կողմնորոշումների բնութագրման վերաբերյալ: Երկրորդ՝ «Արժեքապահանջմունքային կողմնորոշումները օտարացման ներթիմային բնութագրումներում» վերտառությամբ ենթագլխում մատնանշվել են ներթիմային համածմբվածության, սոցիալական խմբում անձի հարմարվողականության, ինչպես նաև՝ խմբի ներսում կոնստրուկտիվ հոգեբանական մթնոլորտի զարգացման և պահմանման գիտատեսական հարցադրումները: «Սոցիալ-հոգեբանական օտարացման հայեցակարգը արժեքապահանջմունքային կողմնորոշումների համատեքստում»

վերտառությամբ երրորդ ենթագլխում ներկայացվում է սոցիալ-հոգեբանական օտարացման հայեցակարգային մոդելը, որը ցույց է տարիս հիմնախնդրի դինամիկ բնույթը: Սողցիալ-հոգեբանական օտարացումը բազմաչափ ֆենոմեն է, որը հիմնված է ներթիմային համախմբվածության արժեքային բնութագրումների վրա և արտահայտվում է որոշակի արժեքային կողմնորոշումների տեսքով: Որքան մեծ է սոցիալ-հոգեբանական հեռավորությունը անձի յուրային և օտար աշխարհների միջև, այնքան ավելի ընդգծվում են օտարացման արժեքային բնութագրումները: Արժեքային կողմնորոշումները որոշում են հարազատ միջավայրի իմաստային սահմանները և ուրվագծում անծանոթների հետ փոխազդեցությունների զարգացման վեկտորը: Անձի սոցիալականացման ընթացքում տեղի ունեցող արժեքային կողմնորոշումների պարզաբանմանը և արդիականացմանը զուգընթաց փոխվում է ոչ միայն «Ես»-ի կառուցվածքը, այլև Ես-ին հակադրվող օտարի պատկերացումներն ու ընկալումները:

Արժեքապահանջմունքային կողմնորոշումների համատեքստում սոցիալ-հոգեբանական օտարացման քննությունը ամփոփվել է փորձարարական հետազոտության արդյունքներով, որոնք ներկայացված են ատենախոսության երրորդ՝ **«Փորձարարական հետազոտության կազմակերպումը և արդյունքների ամփոփումը»** գլխում: Երրորդ գլխի առաջին՝ «Փորձարարական հետազոտության կազմակերպումը և մեթոդական գործիքակազմի հիմնավորումը» ենթագլխում ներկայացված են գիտական վարկածի ապացուցմանն ուղղված հիմնական մեթոդները՝ թեստավորումը, պրոյեկտիվ մեթոդը, հարցաթերթիկի և ռեյտինգավորման մեթոդներ, և դրանց կիրառման հիմնավորումները: Օտարի արժեքապահանջմունքային գնահատման հեղինակային սանդղակի ձևավորման նպատակով իրականացվել է Քրոնբախի ալֆայի վիճակագրական գործակցով վերկուծությունը, որի արդյունքներով որոշվել է կիրառված մեթոդի հուսալիությունը՝ «Օտարի արժեքապահանջմունքային գնահատման իրավիճակային ենթասանդղակով» 0.784 և «Օտարի արժեքապահանջմունքային գնահատման պատկերացութմային ենթասանդղակով» 0.789 Քրոնբախի ալֆայի գործակցով:

Փորձարարական հետազոտության արդյունքները վերլուծվել են JASP 0.17.3.0 վիճակագրական ծրագրով: Հետազոտության արդյունքները համեմատվել և վերլուծվել Principal Component Analysis ֆակտորային մեթոդի կիրառմամբ: Վիճակագրորեն նշանակալի արդյունքները գրանցվել են 0.8 և բարձր միավորներով: Ֆակտորային մեթոդի ընտրությունը պայամնավորված էր հետազոտության նպատակով՝ բացահայտելու օտարի ընկալման արժեքային դրսևորումները հարցվողների խմբերում: Այդ մեթոդը թույլ տվեց վերհանելու հիմնական նշանակություն ունեցող արժեքային կողմնորոշումները, որոնք կարևորվում են ժամանակակից հայ հասարակությունում: Հետազոտության ընթացքում հարցվողները գնահատել են իրենց համար առավել մեծ կարևորություն ներկայացնող արժեքները: Այնուհետև, օտարի ընկալումները բացահայտվել են արժեքային կողմնորոշումների խաչաձև ստուգմամբ:

Հարցվողները գնահատել են այն արժեքները, որոնք, իրենց սուբյեկտիվ կարծիքով, կարելի է վերագրել օտարներին:

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է 20-50 տարեկան անձանց շրջանում: Ընտրանքը (N=1405) տղամարդ (N=700) և կին (N=705) հարցվողները, որոնց տարիքային ներկայացումը բաշխվել է համամասնորեն: Տարիքային խմբերի բաշխվածության հիման վրա ձևավորվել է ընտրանքի անվանական սադղակը՝ ըստ ստորև ներկայացվածի՝

20-30 տարեկան՝ Խումբ 1, տղամարդ (N=233) և կին (N=235)

31-40 տարեկան՝ Խումբ 2, տղամարդ (N=232) և կին (N=235)

41-50 տարեկան՝ Խումբ 3, տղամարդ (N=235) և կին (N=235)

Ընտրանքային հիմնական երեք խմբերի առանձնացումը պայմանավորված է փորձարարական եղանակով ստացված տվյալների ներխմբային ընդհանրություններով և օտարացման հայեցակարգային դրույթների ձևակերպման մեթոդաբանությամբ:

Փորձարարական հետազոտության արդյունքները ներկայացված են «Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն» վերտառությամբ երկրորդ ենթագլխում:

Հետազոտության արդյունքներով ներկայացվել են օտարի իրավիճակային և պատկերացումային գնահատման սանդղակով ստացված տոկոսային ցուցանիշները: Օտարի արժեքային գնահատման ամփոփ պատկերը տղամարդկանց շրջանում ներկայացվում է ստորև (Նկար 1):



Նկար 1. Օտարի արժեքային գնահատման տոկոսային ցուցանիշներ տղամարդկանց շրջանում

Օտարի արժեքային գնահատման ամփոփ պատկերը կանանց շրջանում ներկայացված է Նկար 2-ում:



Նկար 2. Օտարի արժեքային գնահատման տոկոսային ցուցանիշներ կանանց շրջանում

Իրավիճակային գնահատման սանդղակում օտարի ընկալումը սերտորեն փոխկապված է անձի հաղորդակցական հմտությունների հետ: Այդ միտումը ավելի ցայտուն կերպով երևում է Խումբ 1-ի կին ռեսպոնդենտների մոտ, ովքեր տղամարդկանց համեմատ ավելի բարձր են գնահատել այն պնդումները, որոնք վերաբերում են օտարի հաղորդակցական ցածր մակարդակին: Խումբ 2-ում համեմատաբար ավելի թույլ են արտահայտվել օտարի ընկալման իրավիճակային գնահատականները՝ Խումբ 1-ի գնահատումների համեմատ: Նվազման միտումը պահպանվեց նաև Խումբ 3-ի պատասխաններում: Ընդհանուր առմամբ, երեք տարիքային խմբերում օտարի գնահատման պատկերացումային սանդղակն ավելի ուժեղ է արտահայտված իրավիճակային սանդղակի համեմատ: Բացի դրանից, տարիքային բոլոր խմբերում էլ պատկերացումային դաշտում գնահատականները գրեթե չէին տարբերվում միմյանցից, իսկ իրավիճակային սանդղակում, ընդհակառակը, տարիքային երկրորդ խմբում նկատվեց գնահատականների աճի կայուն միտում:

Վերլուծվել են նաև օտարի ինքնաընկալման դրսևորումները հետազոտվող ընտրանքային խմբերում (Նկար 3):



Նկար 3. Օտարի ինքնաընկալման դրսևորումների տոկոսային ցուցանիշներ

Ինչպես ցույց տվեցին Նկար 3-ում ներկայացված տոկոսային տվյալները, նկատվեցին որոշակի միտումներ օտարի ինքնաընկալման արժեքային գնահատականներում: Մասնավորապես, տղամարդկանց շրջանում իրականացված հարցման արդյունքներով վերհանվեցին միջին մակարդակի գնահատականները՝ ընտրանքային երրորդ խմբում թեթևակի աճի միտումներով: Կանանց ընտրանքային խմբերում, ընդհակառակը, շեշտակի կերպով ընդգծվել են օտարի ինքնաընկալման դրսևորումները՝ արտահայտվելով հատկապես 2-րդ և 3-րդ տարիքային խմբերում բարձր մակարդակի գնահատականների դրսևորմամբ:

Անծանոթի/օտարի ընկալման արժեքային կողմնորոշումները վերլուծվել են նաև պրոյեկտիվ մեթոդի կիրառման միջոցով (Աղյուսակ 1):

	Օտարի ընկալում	**Անծանոթի ընկալում**
Արժեքային կողմնորոշումներ	վտանգավոր	տարօրինակ
	տգեղ	էքզոտիկ
	թշնամի	հետաքրքիր
	մարդասպան	գրավիչ
	հանցագործ	անհասկանալի
	սարսափելի	անճանաչելի

Աղյուսակ 1. Անծանոթի/օտարի ընկալման արժեքային կողմնորոշումների որակական վերլուծություն

Առաջնորդվելով գիտական վարկածով և առաջ քաշված հետազոտական խնդիրներով՝ փորձարարական հետազոտության ընթացքում վեր են հանվել նաև անձնային որոշ հատկություններ, որոնց դրսևորման առանձնահատկությունները դիտարկվել են օտարացման հիմնախնդրի շրջանակներում (Նկար 4):

Նկար 4-ում ակնհայտորեն երևում են բոլոր խմբերում (հատկապես՝ 2-րդ և 3-րդ խմբերում) քննվող երևույթների միջին և բարձր մակարդակների զուգընթաց արտահայտվածությունը: Այն հարցվողները, որոնց պատասխանները գրանցվել են նևրոտիզմի միջին և բարձր մակարդակներում, դրսևորել են նաև համապատասխան արդյունքներ փոխկախյալության և սոցիալական ֆրուստրացիայի մակարդակներում:

Նկար 4-ում ներկայացված արդյունքները համապատասխանում են նաև նևրոտիզմի, փոխկախյալության և սոցիալական ֆրուստրացիայի միջև վիճակագրորեն նշանակալի փոխկապվածություններին, որոնք ստացվել են համահարաբերակցային վերլուծության միջոցով: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, նևրոտիզմը աճում է փոխկախյալության (0.844) և սոցիալական ֆրուստրացիայի (0.744) մակարդակի բարձրացման հետ մեկտեղ: Եվ հակառակը, նևրոտիզմի նվազումը կապված է փոխկախյալության (-0.786) և սոցիալական ֆրուստրացիայի (0.197) նվազման հետ: Կարևոր

նշանակություն ունի այն եզրակացությունը, որ փոխկախյալության չափավոր մակարդակի պահպանումը ուղեկցվում է նաև նևրոտիզմի չափավոր մակարդակի պահպանմամբ: Նևրոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության միջև կապը ցույց է տրվում վերը նկարագրված ցուցանիշների կորելյացիոն վերլուծության միջոցով: Տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է JASP 0.17.3.0 ծրագրաշարի միջոցով (Pearson's Partial Correlation, $p < .01$):



Նկար 4. Նևրոտիզմի, սոցիալական ֆրուստրացիայի և փոխկախյալության մակարդակների տոկոսային ցուցանիշներ

Պարզելու համար օտարի ընկալումներում արժեքապահանջմունքային կողմնորոշումների առանձնահատկությունները, իրականացրել ենք նաև փորձարարական հետազոտություն անձի հոգեբանական տարածության սուվերենության բացահայտման ուղղությամբ: Հետազոտության առաջին փուլով քննության է ենթարկվել հարցվողների հոգեբանական տարածության սուվերենության ինքնագնահատումը: Փորձարարական հետազոտության արդյունքներն ամփոփված են ստորև (Աղյուսակ 2):

Կոմպոնենտներ

	RC1	RC2	Uniqueness
Սովորությունների սուվերենություն	0.833		0.169
Իրերի սուվերենություն	0.818		0.421
Արժեքների սուվերենություն	0.752		0.441
Սոցիալական կապերի սուվերենություն	0.704		0.464
Տարածքի սուվերենություն		0.943	0.182
Մարմնի սուվերենություն		-0.757	0.203

Note. Applied rotation method is promax.

Աղյուսակ 2. Հոգեբանական տարածության սուվերենության հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծություն. Հարցվողների ինքնագնահատման արդյունքներ

Հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծության արդյունքում ձևավորվել է կոմպոնենտների երկու խումբ, որոնցից յուրաքանչյուրի ներսում նշանակալի են համարվում մինչև 0.8 գործակիցը (ներառյալ) կրող կոմպոնենտները: Այսպես, հարցվողների ինքնագնահատման արդյունքներով նշանակալի են դարձել սովորությունների, իրերի և տարածքի սուվերենության կոմպոնենտները:

Օտարի գնահատման արդյունքները նույնպես ենթարկվել են հոգեբանական տարածության սուվերենության հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծության (Աղյուսակ 3):

Կոմպոնենտներ

	PC1	PC2	Uniqueness
Արժեքների սուվերենություն	0.904		0.179
Իրերի սուվերենություն	0.739		0.393
Սովորությունների սուվերենություն	0.623	0.638	0.205
Տարածքի սուվերենություն	-0.541		0.623
Մարմնի սուվերենություն		0.890	0.206
Սոցիալական կապերի սուվերենություն		0.830	0.256

Աղյուսակ 3. Հոգեբանական տարածության սուվերենության հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծություն. Օտարի գնահատման արդյունքներ

Օտարի գնահատումներում վիճակագրորեն նշանակալի է դարձել արժեքների սուվերենության կոմպոնենտը: Մեկ այլ կոմպոնենտների խմբում առանձնացան սոցիալական կապերի և մարմնի սուվերենության մակարդակները, որոնք ևս գնահատվել են որպես վիճակագրորեն նշանակալի:

Արժեքների կողմնորոշումների գնահատումները նույնպես ենթարկվել են հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծության: Հետազոտության առաջին փուլով հետազոտվել են հարցվողների ինքնագնահատումները արժեքային կողմնորոշումների վերաբերյալ: Արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Կոմպոնենտներ

	RC1	RC2	RC3	Uniqueness
Հետաքրքիր կյանք	0.924			0.121
Հարմարավետ կյանք	0.889			0.202
Անկախություն	0.762			0.271
Երևակայություն	0.702	-0.556		0.152
Ներքին	0.551		0.515	0.157

Կոմպոնենտներ

	RC1	RC2	RC3	Uniqueness
ներդաշնակություն				
Հավակնություն		0.891		0.190
Ինքնահարգանք		0.759		0.460
Ազնվություն			0.963	0.079

Աղյուսակ 4. Արժեքային կողմնորոշումների հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծություն. Հարցվողների ինքնագնահատման արդյունքներ

Արժեքային կողմնորոշումների հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծությունը ցույց տվեց հարցվողների շրջանում հարմարավետ և հետաքրքիր կյանքի, հավակնությունների և ազնվության կոմպոնենտների ինքնագնահատման բարձր մակարդակը: Հարցվողների ինքնագնահատումները պարզելուց հետո, հետազոտության հաջորդ փուլով բացահայտվել են օտարի վերաբերյալ հարցվողների գնահատումները (Աղյուսակ 5):

Կոմպոնենտներ

	RC1	RC2	RC3	Uniqueness
Հետաքրքիր կյանք	0.892			0.090
Հարմարավետ կյանք	0.876			0.159
Երևակայություն	0.790	-0.439		0.127
Ներքին ներդաշնակություն	0.648		0.447	0.138
Հավակնություն		0.894		0.218
Անկախություն		-0.812		0.254
Ինքնահարգանք		0.668		0.570
Ազնվություն			0.953	0.081

Note. Applied rotation method is promax.

Աղյուսակ 5. Արժեքային կողմնորոշումների հիմնական կոմպոնենտների վիճակագրական վերլուծություն. Օտարի գնահատման արդյունքներ

Օտարի արժեքային գնահատումներում առանձնացել են հարմարավետ և հետաքրքիր կյանքի, հավակնությունների և ազնվության կոմպոնենտները; Հետաքրքիր է, որ օտարի արժեքային գնահատումներում անկախության կոմպոնենտը բացասական գործակցով է արժևորվում, ինչը խոսում է նրա մասին, որ օտարի արժեքային բևեռացումը խորանում է անկախության կոմպոնենտի նվազման հետևանքով: Որքան անձն ավելի ցածր է գնահատվում և արժևորվում անկախություն ունենալու տեսանկյունից, այդքան ավելի թույլ է արտահայտված օտարի ընկալումը: Փորձարարական հետազոտության ընթացքում վեր են հանվել նաև խմբում ինտեգրման և թիմային ինքնագնահատականի մակարդակները (Նկար 5):



Նկար 5. Խմբում ինտեգրման մակարդակի բացահայտման և թիմային ինքնագնահատականի մակարդակի տոկոսային ցուցանիշներ

Խմբի ներսում աշխատակիցների ինտեգրման և թիմային ինքնագնահատականի բարձր մակարդակը փոխկապված է օտարի արտաքին կերպարի տիրապետման հետ: Նման պատկերն ուղեկցվում է խմբի ամբողջականությունը պահպանելու ցանկության, ներխմբային համախմբվածության, թիմակիցների նկատմամբ անկեղծության, աշխատանքային կազմակերպվածության և թիմային պատասխանատվության բարձր մակարդակներով: Թիմի հոգեբանական մթնոլորտի գնահատումները հարցվողների շրջանում կատարվել են երկու՝ բարիդրացիական թիմային մթնոլորտի և կոնֆլիկտային թիմային մթնոլորտի գնահատումների ուղղությամբ: Թիմի հոգեբանական մթնոլորտի գնահատումներն ուղեկցվել են հարցվողների շրջանում օտարի արտաքին/ներքին կերպարի տիրապետման գնահատումների հետ (Նկար 6):



Նկար 6. Թիմի հոգեբանական մթնոլորտի գնահատումների տոկոսային ցուցանիշներ

Նկար 6-ում ցուցադրված տոկոսային ցուցանիշները եկան ապացուցելու նախորդ մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված արդյունքները: Բարիդրացիական թիմային մթնոլորտը կապվում է աշխատանքային կոլեկտիվից դուրս ընկալվող օտարի կերպարի հետ: Թիմի ներսում օտարացման սոցիալ-հոգեբանական գործընթացները հանգեցնում են կոնֆլիկտային հոգեբանական մթնոլորտի շեշտադրմանն ու տիրապետմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքների հիման վրա ամփոփվել են հետևյալ եզրահանգումները:

1. Սոցիալ-հոգեբանական օտարացումն արժեքապահանջմունքային գնահատումների համակարգ է, որի առանցքային հատկանիշներից է արժեքային կողմնորոշումների բևեռացումը և ներթիմային համախմբվածության թուլացումն ու դիսֆունկցիոնալությունը:
2. Սոցիալ-հոգեբանական օտարացման հայեցակարգային մոդելի կառուցվածքում առանձնանում են օտարացման ներթիմային գործոնները, որոնք ունեն երկակի՝ սոցիալ-հոգեբանական և անձնային դետերմինացիա և որոնք նպաստում են օտարացման արժեքապահանջմունքային կողմնորոշումների, վարքային-հաղորդակցական դրսևորումների ձևավորմանը և հանգեցնում ներթիմային համախմբվածության արժեքային փոխակերպումների: Նևրոտիզմի դրսևորման առաջատար գործոնը կարելի է համարել սոցիալական ֆրուստրացիան, որի դեպքում անձը չի կարողանում հաղթահարել սոցիալ-հոգեբանական գործոններով պայմանավորված կյանքի դժվարին իրավիճակները: Ֆրուստրացնող սոցիալ-հոգեբանական գործոնների դեստրուկտիվ ազդեցությունը թույլ է տալիս անձին ամրապնդել փոխկախյալ վարքը, նվազեցնում է նրա սուբյեկտիվությունը և հանգեցնում ներթիմային օտարացմանը:
3. Սոցիալ-հոգեբանական օտարացման արժեքապահանջմունքային կողմնորոշումներում կարևոր դեր և նշանակություն ունի հոգեբանական տարածությունը: Հետազոտության արդյունքում բացահայտվել է հոգեբանական տարածության և արժեքապահանջմունքային կողմնորոշումների միջև կապը: Համաձայն Հիմնական կոմպոնենտների վերլուծության արդյունքների, օտարացման գործընթացում վիճակագրորեն նշանակալի են դարձել արժեքների (0.904) և սոցիալական կապերի (0.830) սուվերենության մակարդակները, ինչը վկայում է նրա մասին, որ արժեքների բևեռացման, սոցիալական կապերի թուլացման դինամիկան հանգեցնում է ներթիմային օտարացմանն ու թիմային ինքնագնահատականի նվազմանը:
4. Խմբի ներսում աշխատակիցների ինտեգրման և թիմային ինքնագնահատականի բարձր մակարդակը փոխկապված է օտարի արտաքին կերպարի ձևավորման հետ: Նման պատկերն ուղեկցվում է խմբի ամբողջականությունը պահպանելու ցանկության, ներխմբային համախմբվածության, թիմակիցների նկատմամբ անկեղծության,

աշխատանքային կազմակերպվածության և թիմային պատասխանատվության բարձր մակարդակներով: Թիմի ներսում համախմբված փոխգործակցության մակարդակը, թիմակիցների հոգեբանական համատեղելիությունը և թիմային առաջադրանքների կատարման մակարդակը փոխկապված է օտարի արտաքին/ներքին արժեքային գնահատման հետ:

5. Թիմի ներսում օտարացման սոցիալ-հոգեբանական գործընթացները հանգեցնում են կոնֆլիկտային հոգեբանական մթնոլորտի շեշտադրմանն ու տիրապետմանը: Սոցիալ-հոգեբանական օտարացման ներթիմային գործընթացը սերտորեն փոխկապված է անձի հաղորդակցական հմտությունների հետ:

6. Սոցիալ-հոգեբանական օտարացման ներթիմային գործընթացներում նևրոտիզմի մակարդակն աճում է փոխկախյալության (0.844) և սոցիալական ֆրուստրացիայի (0.744) մակարդակի բարձրացման հետ մեկտեղ: Եվ հակառակը, նևրոտիզմի նվազումը կապված է փոխկախյալության (-0.786) և սոցիալական ֆրուստրացիայի (0.197) նվազման հետ, ինչը նպաստում է ներթիմային համախմբվածությանն ու թիմային ինքնազնահատականի բարձրացմանը:

7. Ներթիմային համախմբվածության արժեքային գնահատումներում անկախության կոմպոնենտը բացասական գործակցով է գնահատվում, ինչը խոսում է նրա մասին, որ ներթիմային օտարացմանը հանգեցնող արժեքային բևեռացումը խորանում է անկախության կոմպոնենտի աճի հետևանքով: Օտարն ընկալվում է թիմից անկախ, ուրույն արժեքային համակարգով և պահանջմունքներով: Որքան անձն ավելի ցածր է արժևորում թիմակիցներից անկախության արժեքապահանջմունքային բաղադրիչը, այդքան ավելի թույլ է արտահայտված ներթիմային օտարացումը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում:

- Vatyan T., Perception of the Other and Social -Psychological Processes of Personal Aging, Katchar Scientific Periodical. Yerevan, 2023, № 1, 29-34.
- Vatyan T., Psychometric Tools for Defining the Other from the Perspective of Social Psychology, Katchar Scientific Periodical. Yerevan, 2024, № 2, 20-27.
- Vatyan T., Value Orientations of a Person in the Context of Perception of the Other, Katchar / Academia. Social Science Periodical. Yerevan, 2025, № 2, 60-70.
- Vatyan T., Perception of the Other and Psychological Space, Katchar / Academia. Social Science Periodical. Yerevan, 2026, № 1, 43-56.
- Vatyan T., On the Issue of the Perception of the Other, Main Issues of Pedagogy and Psychology, 2025, vol.12, № 2, 51-59.
- Hakobyan N., Vatyan T., Khachatryan A., Perception of the Other in the Concept of Workplace Wellbeing, Wisdom, 2025, vol. 2 (32), 39-48.

ВАТЯН ТАТЕВИК ЗОРИКОВНА

ПРОБЛЕМА СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОТЧУЖДЕНИЯ В СИСТЕМЕ ВНУТРИКОМАНДНЫХ ЦЕННОСТНО-ПОТРЕБНОСТНЫХ ОРИЕНТАЦИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. “Социальная психология”.

Защита состоится 14.07.2026 г. на заседании специализированного совета по психологии 064 Комитет по высшему образованию и науке по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что проблема социально-психологического отчуждения исследуется в контексте внутрикомандных ценностно-потребностных ориентаций. Представлена концептуальная модель социально-психологического отчуждения и основные формы проявлений в рабочем коллективе, изучается фактор проявления внутригрупповой сплоченности и психологической атмосферы в коллективе и формирования ценностных ориентаций и организации поведенческих моделей.

Цель исследования:

Изучить социально-психологические интерпретации проблемы отчуждения, выявить аспекты отчуждения в системе внутрикомандных ценностно-потребностных ориентаций, исследовать ценностные ориентации социально-психологического отчуждения в субъективных оценках психологической атмосферы и внутрикомандной сплоченности.

Основные задачи исследвания:

- Изучить теоретические интерпретации проблемы социально-психологического отчуждения,
- Выявить социально-психологические проявления проблемы отчуждения,
- Провести теоретический анализ ценностно-потребностных ориентаций,
- Выявить характеристики внутрикомандных ценностно-потребностных ориентаций социально-психологического отчуждения,
- Разработать концептуальную модель социально-психологического отчуждения,
- Экспериментальным путем выявить взаимосвязи социально-психологического отчуждения и организации психологической атмосферы,
- Экспериментальным путем выявить ценностные ориентации социально-психологического отчуждения, внутрикомандной сплоченности и внутрикомандной самооценки.

Гипотеза исследования.

Предполагается, что социально-психологическое отчуждение, как система внутрикомандных оценок ценностных потребностей, выражается в поляризации

ценностных ориентаций и дисфункциональности внутригрупповой сплоченности, где социально-психологическая атмосфера и параметры психологического пространства выступают в качестве взаимозависимых детерминантов, определяющих уровень сплоченности и ее динамику. 1. Предполагается, что процессы социально-психологического отчуждения в команде выступают в качестве детерминантов, определяющих формирование конфликтной атмосферы и ее доминирование. 2. Ценностно-потребностные характеристики социально-психологического отчуждения имеют двойственный - социально-психологический и личностный, характер, где факторы невротизма, социальной фрустрации и взаимозависимости играют ключевую роль в личностной сфере.

Научная новизна исследования.

Открытие психологического пространства как внутрикомандного ценностно-потребностного компонента проблемы социально-психологического отчуждения позволяет по-новому взглянуть на феномены внутрикомандной сплоченности и командной самооценки в рабочих коллективах. Проблема социально-психологического отчуждения представлена через комплексную структуру ценностно-смысловых и поведенческо-коммуникативных характеристик.

Теоретическая и практическая значимость исследования.

Теоретическая значимость исследования заключается в представлении ценностно-ориентированных и поведенческих, коммуникативных характеристик отчуждения. Подчеркивается философско-теоретическая и практическая значимость исследования социально-психологического отчуждения как методологической основы для оценки благополучия на рабочем месте. Основные результаты исследования позволяют расширить научное понимание организации психологической атмосферы внутри команды и современных процессов оценки благополучия в рабочей среде.

Достоверность результатов. Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы, задач и методов исследования. Теоретические положения и выводы работы получены на основе многостороннего научного анализа экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования обсуждались на заседаниях кафедры психологии Международного научно-образовательного центра НАН РА, на круглых столах, семинарах и экспертных дискуссиях в различных центрах психического здоровья. Результаты исследования были обобщены в 8-ми научных публикациях.

Структура работы.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии, приложения, 19 таблиц и 13 рисунков. Объем работы составляет 137 печатные страницы. Был использован 191 источник литературы на армянском и иностранных языках.

По теме диссертации опубликовано 6 статей.

VATYAN TATEVIK

THE PROBLEM OF SOCIO-PSYCHOLOGICAL OTHERING IN THE SYSTEM OF INTRA-TEAM VALUE-NEED ORIENTATIONS

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.03. "Social Psychology". The defence of this thesis will take place at 14.07.2026 at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan.

Address: Tigran Mets street 17, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

Actuality.

The relevance of this dissertation research lies in the fact that the problem of socio-psychological othering is examined in the context of intra-team value-need orientations. This study presents a conceptual model of socio-psychological othering and its main manifestations in the workforce. The socio-psychological phenomenon of othering is studied as a factor in the manifestation of intra-group cohesion and the psychological atmosphere within the team, as well as a significant indicator of the formation of value orientations and the organization of behavioral patterns.

Objective of the research.

To study the socio-psychological interpretations of the problem of othering, to identify aspects of othering in the system of intra-team value-need orientations, to explore the value orientations of socio-psychological othering in subjective assessments of the psychological atmosphere and intra-team cohesion.

Main tasks of the research are:

• Explore theoretical interpretations of the problem of socio-psychological othering,

• Identify socio-psychological manifestations of the problem of othering,

• Conduct a theoretical analysis of value-need orientations,

• Identify the characteristics of intra-team value-need orientations of socio-psychological othering,

• Develop a conceptual model of socio-psychological othering,

• Experimentally identify the relationships between socio-psychological othering and the organization of the psychological atmosphere,

• Experimentally identify the value orientations of socio-psychological othering, intra-team cohesion, and intra-team self-esteem.

Hypothesis of the research.

It is assumed that socio-psychological othering, as a system of intra-team assessments of value needs, is expressed in the polarization of value orientations and dysfunctional intra-group cohesion, where the socio-psychological atmosphere and the

parameters of psychological space act as interdependent determinants defining the level of cohesion and its dynamics.

1. It is assumed that processes of socio-psychological othering within a team act as determinants defining the formation and dominance of a conflictual psychological atmosphere.

2. The value-need characteristics of socio-psychological othering are dual in nature—social-psychological and personal—where factors of neuroticism, social frustration, and interdependence play a key role in the personal sphere.

Scientific novelty of the research.

The discovery of psychological space as an intra-team value-need component of the problem of socio-psychological othering allows for a new perspective on the phenomena of intra-team cohesion and team self-esteem in work groups. The problem of socio-psychological othering is presented through a complex structure of value-semantic and behavioral-communicative characteristics.

Theoretical and practical significance of the research.

The theoretical significance of this study lies in its presentation of the value-oriented, behavioral, and communicative characteristics of othering. It emphasizes the philosophical, theoretical, and practical significance of research of socio-psychological othering as a methodological basis for assessing well-being in the workplace. The study's key findings expand scientific understanding of the organization of psychological atmosphere and modern processes for assessing well-being in the workplace.

Credibility of results.

The reliability of the results is due to methodological validity, the correspondence of the goal, hypothesis, main tasks and research methods. Theoretical provisions and conclusions of the work were obtained on the basis of a multilateral scientific analysis of experimental data.

Approbation and adoption of the research results.

The study results were discussed at meetings of the Department of Psychology of the International Scientific and Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, as well as at roundtables, seminars, and expert discussions at various mental health centers. The results were summarized in eight scientific publications.

Structure of the thesis.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography, an appendix, 19 tables, and 13 figures. The volume of the work is.137 printed page. 191 reference sources in Armenian and foreign languages were used.

Six articles have been published on the subject of the thesis.